Հավելված

Շիրակամուտ համայնքի ղեկավարի

2020թ. օգոստոսի 10-ի 71 -Ն որոշման

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությամբ սահմանվում են Շիրակամուտ համայնքի զորահավաքային մարմինների խնդիրները, գործունեության իրականացման և ղեկավարման հետ կապված հարաբերությունները:

2. Շիրակամուտ համայնքի զորահավաքային մարմինները ստեղծվում են տեղական ինքնակառավարման մարմիններում, զորահավաքային առաջադրանքներ կատարող կազմակերպություններում:

3.Շիրակամուտ համայնքի զորահավաքային մարմիններն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են Սահմանադրությամբ, օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով, համապատասխան մարմնի զորահավաքային պլաններով:

4. Շիրակամուտ համայնքի զորահավաքային մարմինները գործում են որպես աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում: Զորահավաքային առաջադրանքներ կատարող կազմակերպության ղեկավարի հրամանով զորահավաքային մարմնի գործառույթների իրականացումը կարող է դրվել կազմակերպության աշխատակցի կամ ստորաբաժանման վրա:

5. Շիրակամուտ համայնքի զորահավաքային մարմինների կառուցվածքը և կազմը որոշվում է՝ հաշվի առնելով խաղաղ ժամանակ և Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների պայմաններում տեղական ինքնակառավարման մարմնին, զորահավաքային առաջադրանքներ կատարող կազմակերպությանը վերապահված խնդիրների բնույթից և ծավալից:

II. ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

6. Զորահավաքային մարմինների խնդիրներն են՝ պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում, զորահավաքային առաջադրանքներ կատարող կազմակերպություններում զորահավաքային նախապատրաստության ապահովումը, զորահավաքային պլանների համաձայն՝ զորահավաքի ժամանակ զինված ուժերի և այլ զորքերի համալրումն ու նյութատեխնիկական ապահովման իրականացումը, համապատասխան մարմինների (կազմակերպությունների) գործունեությունը պատերազմական ժամանակաշրջանի աշխատանքային ռեժիմի փոխադրմանն օժանդակումը, աշխատող պահեստազորայինների զորահավաքային ամրագրման իրականացնումը:

7. Խաղաղ ժամանակ և Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների պայմաններում՝

1) տեղական ինքնակառավարման մարմինների զորահավաքային պլանների համաձայն զորահավաքային մարմիններն իրականացնում են՝

ա. զորահավաքային պլանների մշակումը և դրանց կատարման ապահովումը,

բ. պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, պահեստազորային պատրաստության միջոցառումների և զորահավաքային զորակոչի իրականացմանն ու զինված ուժերը պայմանագրային զինծառայողներով համալրմանն աջակցումը,

գ. զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին մասնակցության ապահովումը,

դ. համայնքապետարաններում աշխատող պահեստազորայինների ամրագրման աշխատանքների կատարումը,

ե. համայնքները և համայնքների գործունեությունը պատերազմական ժամանակաշրջանի աշխատանքային ռեժիմի փոխադրելու մեխանիզմների կիրառման ու պլանավորման ապահովումը,

զ. պաշտպանության նպատակով համայնքի վարչական տարածքի և հաղորդակցության ուղիների նախապատրաստման միջոցառումների անցկացումը և զինված ուժերի զորահավաքային ծավալմանն աջակցումը,

է. համայնքի վարչական տարածքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և ապահովումը,

ը. զորահավաքային նախապատրաստության շրջանակներում և զորահավաքի ժամանակ զինվորական կոմիսարիատներին օժանդակումը՝ զորահավաքային խնդիրների լուծման ուղղությամբ,

թ. զորահավաքի ժամանակ զորահավաքային զորակոչի ենթակա քաղաքացիներին ծանուցման, տրանսպորտային միջոցները՝ հավաքակայան կամ զորամասեր առաքման, զորահավաքային պլանների համաձայն՝ շենքերի, կառույցների և հողամասերի, հաղորդակցության, տրանսպորտային և այլ նյութական միջոցների տրամադրման ապահովման վերաբերյալ առաջարկությունների մշակումը,

ժ. «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ միջոցառումների իրականացման ապահովումը.

4) կազմակերպությունների զորահավաքային խնդիրների համաձայն զորահավաքային մարմիններն իրականացնում են՝

ա. կազմակերպության զորահավաքային նախապատրաստության միջոցառումների պլանավորումը և զորահավաքային պլանների մշակումը,

բ. զորահավաքային առաջադրանքների շրջանակներում սահմանված կարգով ռազմական նշանակության արտադրանքի թողարկման, վերանորոգման, մատակարարման և այլ բնույթի ծառայությունների մատուցման նախապատրաստումն ու դրանց իրականացման ապահովումը,

գ. զորահավաքային առաջադրանքների կատարումն ապահովելու համար արտադրությունը նախապատրաստելու ուղղությամբ միջոցների ձեռնարկման ապահովումը,

դ. զորահավաքային պլանների համաձայն՝ ղորահավաքային պահուստի ապրանքների կուտակման, պահպանման և ժամանակին թարմացման հաշվառումն ու ապահովումը,

ե. տրանսպորտային միջոցների օգտագործման հետ կապված գործընթացի իրականացման ապահովումը, ինչպես նաև զինվորական կոմիսարիատներին օժանդակումը՝ զինվորական հաշվառման, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, զորահավաքային խնդիրների իրականացման գործընթացում,

զ. քաղաքացիական պաշտպանության խնդիրների իրագործման և զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին մասնակցությունը, սահմանված կարգով՝ դրանց անցկացումը,

է. կազմակերպությունում աշխատող պահեստազորայինների ամրագրման աշխատանքների կատարումը,

ը. ռազմական դրություն հայտարարելու դեպքում արտադրությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրելու ուղղությամբ համապատասխան միջոցների ձեռնարկման ապահովումը,

թ. զորահավաք հայտարարվելու դեպքում զորահավաքային պլաններով նախատեսված՝ հավաքակայան կամ զորամասեր տեխնիկայի առաքման, իրենց հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող քաղաքացիներին զինվորական ծառայության զորակոչվելու մասին ծանուցումը և զորամասեր կամ հավաքակայան նրանց ներկայացման ապահովումը,

ժ. «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ միջոցառումների իրականացման ապահովումը:

8. Զորահավաքային մարմիններն իրավունք ունեն՝

1) առաջարկություններ ներկայացնել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի ու քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարելագործման վերաբերյալ,

2) իրենց գործառույթների և խնդիրների իրականացման առնչությամբ կազմակերպել քննարկումներ, հրավիրել խորհրդակցություններ, ըստ անհրաժեշտության դրանց մասնակից դարձնելով մարմնի (կազմակերպության) համապատասխան պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների, աշխատանքների արդյունքներից ելնելով՝ մարմնի (կազմակերպության) ղեկավարին ներկայացնել առաջարկություններ,

3) իրենց իրավասությունների սահմաններում համակարգել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի ու քաղաքացիական պաշտպանության հետ կապված միջոցառումները,

4) խաղաղ և ռազմական դրության ժամանակ օրենքով սահմանված կարգով վերահսկել ենթակա կազմակերպությունների զորահավաքային նախապատրաստության, քաղաքացիական պաշտպանության, ինչպես նաև համակարգի զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների՝ զորահավաքային պատվերների կատարման պայմանագրերով նախատեսված զորահավաքային միջոցառումների կատարման աշխատանքները

5) մարմնի (կազմակերպության) ղեկավարի համաձայնությամբ հանդես գալ միջգերատեսչական կամ փոխգործակցային մակարդակում՝ որպես մարմնի (կազմակերպության) ներկայացուցիչ:

III. ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

9. Տեղական ինքնակառավարման մարմինների, զորահավաքային առաջադրանքներ կատարող կազմակերպությունների զորահավաքային մարմինը գործում է զորահավաքային մարմնի ղեկավարի ենթակայությամբ:

10. Զորահավաքային մարմնի ղեկավարն անմիջական հաշվետու է պետական կամ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմնի, զորահավաքային առաջադրանքներ կատարող կազմակերպության ղեկավարին:

11.Տեղական ինքնակառավարման մարմինները, զորահավաքային առաջադրանքներ կատարող կազմակերպություններն ապահովում են զորահավաքային մարմինների գործունեության համար անհրաժեշտ աշխատանքային պայմաններով և գաղտնի տեղեկատվության հետ առնչվելու թույլտվության համապատասխան ձևերով:

12. Զորահավաքային մարմինների գաղտնի գործավարությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: